Վ. Հ. ՓԱՓԱԶՅԱՆ, Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում 16—17-րդ դդ., Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1990, 195 էջ։

Արևմտա-եվրոպական պետությունների՝ Արևելքի երկրներ գաղութային թափանցումների պատմության ընթացքի բազմակողմանի ուսումնասիրության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում այդ երկրների սոցիալ-տնտեսական, առևտրական հարաբերությունների բազմակողմանի ուսումնասիրության հարցերը։ Ինչպես համաշխարհային, այնպես էլ խորհրդային պատմագրության մեջ այս հարցերի վերաբերյալ հարուստ դրականություն կա, որտեղ առաջ են քաշվել բազմաթիվ, երբեմն հակասական տեսակետներ։ Առկա ուսումնասիրություններում գրեթե բացակայում են այնպիսի հիմնարար տեսություններ, որոնք մշակված լինեն հարուստ, բազմալեզու, նորահայտ նյութերի մանրագիտական ուսումնասիրության հիման վրա։ Այս առումով, առանց չափազանցության, դիտական մեծ արժեք և հետաքրքրություն է ներկայացնում պատմական գիտությունների թեկնածու Վ. Հ. Փափազյանի մենագրությունը, որը պարզություն է մտցնում այդ բարդ պրոբլեմի բազմակողմանի ուսումնասիրության գործում։ Ուսումնասիրությունը գրված է հարուստ և բազմալեզու գրականության հիման վրա։ Հեղինակի կողմից ուսումնասիրված և օգտագործված հայերեն, պարսկերեն, անգլերեն, ֆրանսերեն աղբյուրների զգալի մասը դիտական շրջանառության մեջ է դրվել առաջին անգամ։ Հատկապես մեծ արժեք են ներկայացնում Նոր Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի արխիվում պահվող պարսկալեզու վավերագրերը, որոնք մինչև վերջերս անհասանելի էին ուսումնասիրողների համար։

Դրախոսվող ուսումնասիրության հենքը կազմում են վաճառականների, ուղևորների օրագրությունները, ուղեգրական գրառումները, կատարված հայերի կողմից։ Այս կարգի աղբյուրների մեծ մասը առաջին անգամ է ուսումնասիրվում պատմագիտության մեջ։ Հեղինակը, դարձյալ առաջին անգամ, գիտական ուսումնասիրության մեջ է դրել Նոր Ջուղայի սբ. Ստեփանոս վանքի մատենադարանում պահվող պարսկալեզու վավերագրեր, որոնք վերաբերում են առևտրահարկերին, առևտրական ուղիների ապահովության կազմակերպմանը և դրանց առնչվող բազմաթիվ այլ հարցերի։

Աշխատությունը շարադրելիս Վ. Փափազյանը մեծապես օգտվել է հայ, պարսիկ և թուրք հեղինակների՝ Առաքել Դավրիժեցու, Գրիգոր Կամախեցու, Սիմոն Լեհացու, Զաքարիա Քանաքեռցու, Էվլիա Չելեբիի, Շարաֆ խան Բիդլիսիի, Հասան բեկ Ռումլու, Իսկանդար Մունշիի, Նասիր Խուրոֆի, Համադալլա Ղազվինիի, Ֆազուլլահ Ռաշիդ ադ-Դինի և շատ ուրիշների գործերից։

Ուսումնասիրության յուրահատկությունը կայանում է նրանում, որ հեղինակի կողմից լայնորեն ուսումնասիրվել և օգտագործվել են նաև եվրոպական սկզբնաղբյուրները։ Դրանք անգլերեն, ֆրանսերեն լեզուներով ուղեգրություններ են, առևտրական հաշիվներ, հաշվետվություններ, նամակներ, զեկուցագրեր և նման կարգի այլ փաստաթղթեր, որոնք թողել են եվրոպական ուղեգիրները, վաճառականները, կաթոլիկ քարոզիչները։ Այս կարգի գործերից օգտագործվել են Ժան-Բատիստ Տավերնիեի, Ժան Շարդենի, Միշել Ֆեբրիի և մյուսների գործերը։

Աշխատության առաջին գլխում պատմական լայն ֆոնի վրա մանրամասն քննության է ենթարկվում Իրանի առևտրի վրա աշխարհագրական հայտնագործությունների և թուրքական նվաճումների ազդեցության հարցը։ Վերը նշված աղբյուրների և գիտական գրականության մանրազնին ուսումնասիրության հիման վրա հեղինակը եկել է այն եզրակացության, որ ավելի քան հարյուր տարի Աֆրիկայի շուրջը բացված ծովային ուղին չկարողացավ նշանակալից դեր խաղալ Իրանի և Արևմուտքի միջև կատարվող առևտրում։ Այս առևտրի վրա ոչ մի էական ազդեցություն չունեցան նաև թուրքական նվաճումները։ Մտահոգ լինելով նվաճված երկրներին հպատակության մեջ պահելու հարցերով, թուրք-օսմաններն իրենք չէին մասնակցում այդ առևտրին։ Չնայած դրան, թուրքերը ձգտում էին նպաստել այդ առևտրի զարգացմանը։

Սեֆյան պետության և Արևմտյան Եվրոպայի երկրների միջև առևտուրը հատկապես ուժեղացավ 1639 թ. Իրանի և Թուրքիայի միջև հաշտության պայմանագրի կնքումից հետո, երբ

բարենպաստ պայմաններ ստեղծվեցին առևտրական քարավանների ապահով տեղաշարժերի համար։ Մեծ չափերի հասավ առևտուրը Վենետիկի, Հոլանդիայի, Անգլիայի, Ֆրանսիայի հետ։ Հեղինակին հաջողվել է պարզել, որ Իրանի արտաքին առևտրի հիմնական մասը, իսկ հում մետաքսի ողջ արտահանումը իրականացվում էր Հյուսիսային Իրանի, Հայաստանի, Փոքր Ասիայի, Միջագետքի վրայով։

Այս գլխում մանրամասն քննության է ենթարկվել նաև անգլիական Արևելա-Հնդկական ընկերության և Նոր Ջուղայի հայ վաճառականների ներկայացուցիչ խոջա Փանոս Քալանթարի միջև 1688 թ. կնքված առևտրական պայմանագիրը, ըստ որի անգլիացիները պարտավորվում էին իրենց նավերով տեղափոխել հայերին պատկանող մետաքսը։ Սակայն այս պայմանագիրն առանձնակի արդյունք չտվեց։ Քարավանային առևտրում հմտացած հայ վաճառականներին քիչ էր հետաքրքրում առևտրի ծովային ուղին։

Իր ուսումնասիրության երկրորդ գլուխը Վ. Փափազյանը նվիրել է Թավրիզ-Հալեպ, Թավրիզ-Զմյուռնիա առևտրական մայրուղիներին և դրանց հետ առնչվող հարցերին։ Արևմուտքի հետ կատարվող Իրանի առևտրի այս զարկերակների դերը, հեղինակի կարծիքով, հավասար չի եղել։ Ողջ 16-րդ դարում առաջնությունը պատկանել է Թավրիզ-Հալեպ մայրուղուն։ Սկսած 17-րդ դարի 20-ական թվականներից աճում է երկրորդ՝ Թավրիզ-Զմյուռնիա առևտրական ուղու նշանակությունը։ Այդ երկու մայրուղիներն էլ հիմնականում անցնում էին Հայաստանով և հայերով բնակեցված տարածքներով։ Այս ուղիների վրա հայկական առևտրական կապիտալն իր ձեռքում էր պահում տնտեսական կյանքի լծակների մեծ մասը։ Հեղինակը ճշտել է, որ Թավրիզ-Հալեպ առևտրական ուղու կայաններն էին՝ Թավրիզ—Մարանդ—Զորսնուշար—Բանդիմահի (Բերկրի)—Կարաքյոփրու—Արճիշ—Ադիլչևազ (Արծկե)—Ախլաթ (Խլաթ)—Կարմոս—Դատվան—Բիթլիս (Բաղեշ)—Գիրկի—Խզու—Դիարբեքիր (Ամիդ)—Ուրֆա (Եդեսիա)—Ջաֆարաղոն—Այնթափ—Բիրջիկ—Հալեպ։

Առևտրական քարավանները Թավրիզից Զմյուռնիա անցնում էին հետևյալ ուղիով. Թավրիզ—Մարանդ—Ջուղա—Նախիջևան—Երևան—Էջմիածին—Աղջազալա (Երվանդակերտ)—Կաղզվան—Զորանքյորփի—Էրզրում (Կարին)—Թոխաթ—Զմյուռնիա։

Առևտրական հիմնական հարկերին նվիրված գլխում առանձին բաժին է նվիրված թաղմային և նրա վերացման հանգամանքներին։ Այս հարցն ուսումնասիրվել է պարսկական աղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա։ Առաջին անգամ Վ. Փափազյանի կողմից ուսումնասիրվել է 1565 թ. Թահմազ I-ի կողմից ընդունված հրովարտակը, ըստ որի վերացվեց թաղմա հարկատեսակը։ Այս գլխի մեկ այլ բաժնում մանրակրկիտ վերլուծության է ենթարկված առևտրաուղիների անվտանգությունն ապահովող ծառայությունների համար գանձվող ռահգարի կոչվող հարկի հարցը։ Այն ժամանակ, երբ Թուրքիայով անցնող ուղիները շատ վտանգավոր էին, առևտրական քարավանները հարձակման էին ենթարկվում ոչ միայն ավազակների, այլև հենց նրանց կողմից, ում վստահված էր առևտրաուղիների անվտանգությունն ապահովելու պատասխանատվությունը։ Իրանում վիճակն ավելի բարվոք էր։ Այստեղ ռահդարության համակարգը որոշակի պայմաններ էր ստեղծում ինչպես տեղափոխվող ապրանքների, այնպես էլ քարավանային ուղեկցողների համար։

Հայաստանի վրայով և հայաբնակ վայրերով անցնող առևտրական ուղիները մեծ դեր էին խաղում երկրի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի զարգացման գործում։ Այդ ուղիների դերի ուսումնասիրությունը աշխատության հեղինակին հասցրել է այն հետաքրքիր հետևությանը, որ միևնույն ժամանակահատվածում քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը միևնույն զարգացման աստիճանի վրա չեն գտնվել։ Եթե քննարկվող պատմական դարաշրջանում Հայաստանը գտնվում էր Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո և քաղաքական ազատ զարգացման հույս անգամ չկար, ապա երկրի մի մասի տնտեսական կյանքում, համենայնդեպս նրա կարևոր ճյուղերից մեկում՝ առևտրում, նկատվում էր զգալի առաջադիմություն, որի հիմնական պայմաններից մեկը պետք է համարել 16—17-րդ դդ. Հայաստանի առևտրական ուղիների կատարած կարևոր դերը միջազգային առևտրում։

Աղբյուրագիտական մեծ արժեք ունեն ուսումնասիրությանը կցված հավելված փաստաթղթերը։ Այստեղ տեղ են գտել Նոր Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի արխիվում պահվող, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող Թահմազ I-ի 1565 թ. հրովարտակը՝ թամգա հարկատեսակի վերացման, Սաֆի II-ի 1634 թ. հրովարտակը՝ ռահգարության հարկերի մասին, շուղայեցի առևտրականներին տրված արտոնությունների մասին, Կոստանդ վարժապետ Ջուղայեցու «Աշխարհաժողովի» Թավրիզ-Հալեպ առևտրական մայրուղուն վերաբերող

հատվածի նկարագրությունը։ Ընդամենը երեք էջ կազմող այս վավերագիրը գիտական տեսքի բերելու և հասկանալի դարձնելու համար Վ. Փափազյանին հարկ է եղել ճշտել և ծանոթագրել հարյուր երեսունից ավելի մաքսերի, հարկերի, դրամների, չափերի, քաշերի, ծավալների, ապրանքների տեսականու տերմիններ։ Թավրիզ—Զմյուռնիա առևտրամայրուղու Թավրիզ—Էրզրում հատվածի Զաքարիա Ադուլեցու նկարագրությունների հիման վրա հեղինակը կազմել է քարտեզ, ուր ճշտել է քառասունից ավելի կայանների, տասից ավելի մաքսատների և ռահդախանների տեղերը։ Այս քարտեզները կարող են գործնական նշանակություն ունենալ այդ ռեգիոնի ընդհանուր քարտեզի կազմման համար։

Սակայն պետք է նկատել, որ աշխատությունը շատ ավելի կշահեր, եթե հեղինակը նույնքան մանրամասն ուսումնասիրություն ենթարկեր Սեֆյան կառավարության տարածքով անցնող մյուս, մասնավորապես Սպահանից դուրս եկող առևտրաուղիները։ Ցանկալի կլիներ նաև, որ բացի թաղմա և ռահդարի կոչվող առևտրահարկերից և մաքսերից վերլուծության ենթարկվեին նաև մյուս հարկերն ու մաքսերը։

Վ. Փափազյանի «Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում 16—17-րդ դդ.» աշխատության մեջ առաջին անգամ հաջողված փորձ է արված ցույց տալու Հայաստանի առևտրական ուղիների դերն ու տեղը միջազգային առևտրի համակարգում, նրա կարևորագույն ժամանակաշրջաններից մեկում։ Այս հիմնական խնդրից բացի հեղինակն աշխատել է վերհանել հայ վաճառականների դերը միջազգային առևտրում, որին հայ վաճառականները ոչ թե պասսիվ դիտորդ էին, այլ ակտիվ մասնակից։

Ամփոփենք ասելիքը. Վ. Փափազյանի «Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում՝ 16—17-րդ դդ.» աշխատությունը գիտական լուրջ հետաքրքրություն ներկայացնող արժեք է հայ պատմագիտության մեջ։

Ռ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր